# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 262-Ա

### ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՂՎԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.03.2020Թ. N 69-Ա ԵՎ 12.03.2020Թ. N 82-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումներով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված տնտեսական խանութը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Սուսաննա Սերյոժայի Աղվանյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-235 դրական եզրակացությունը, համայնքի

ավագանու 29.07.2021թ. N 83-Ա որոշումը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից 05.08.2021թ. կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը **որոշում եմ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 06.03.2020թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին» N 69-Ա և 12.03.2020թ. «Ինքնակամ կառուցված տնտեսական խանութի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու, Ալավերդի համայնքի ղեկավարի 20.06.2019թ. N 224-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 82-Ա որոշումները:

2.Պետական սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող, 06-002-0050-0233 կադաստրային ծածկագրով (առաջացած՝ 06-002-0050-0148 կադաստրային ծածկագրից), 0.01368 հա մակերեսով հողամասը, որից 0.00593 հա մակերեսով անտառային նպատակային նշանակության, թփուտ գործառնական նշանակության և 0.00775 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքի հող նպատակային նշանակության, պատմական և մշակութային գործառնական նշանակության հողամասերը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

3.Նշված հողատեսքերի փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում՝ համայնքի հողային հաշվեկշռում փոփոխություններն ընդգրկելու համար:

4.Ճանաչել Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը պետական սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող, 06-002-0050-0233 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման 0.01368 հա մակերեսով հողամասի և հողամասում Սուսաննա Սերյոժայի Աղվանյանի կողմից ինքնակամ կառուցված, 93.45 քմ արտաքին մակերեսով (83.7 քմ ներքին մակերեսով) տնտեսական խանութի նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից 05.08.2021թ. կազմված հատակագծի:

5.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող, Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող, 06-002-0050-0233 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում Սուսաննա Սերյոժայի Աղվանյանի կողմից 1988թ. ինքնակամ կառուցված 93.45 քմ արտաքին մակերեսով (83.7 քմ ներքին մակերեսով) հասարակական նշանակության տնտեսական խանութը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.01368 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասով:

6.Շինության զբաղեցրած 0.01368 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

7.Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող տնտեսական խանութին տրամադրել համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Պղնձագործների փողոց, N 1/10 փոստային հասցե:

8.Համայնքապետարանի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, 06-002-0050-0233 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման 0.01368 հա մակերեսով հողամասի և 93.45 քմ մակերեսով տնտեսական խանութի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

9.Հանձնարարել համայնքապետարանի քաղաքաշինության գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Սուսաննա Սերյոժայի Աղվանյանին, օրինականացված տնտեսական խանութը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. օգոստոսի 12
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 263-Ա

## 06-002-0198-0183 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ 0.06 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.03 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱՁԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, ‹‹Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին›› Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հաշվի առնելով, որ բնակելի տունը, ծածկը, ավտոտնակը, ջրավազանը, պարիսպը, կատարված ձևափոխությունները չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Էլպիդա Դավիդովայի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, 20.04.1975 թվականի հատակագիծը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 05.12.2019 թ. վճիռը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 06.08.2021թ. տրված թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1.Վերականգնել Էլպիդա Դավիդովային ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամաս N 88 հասցեում գտնվող, 1955 թվականին կառուցված բնակելի տան և 0.06 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:

2.Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1992 թվականին կառուցված բնակելի տունը, ծածկը, ավտոտնակը, ջրավազանը, պարիսպը, կատարված ձևափոխությունները և տնամերձ հողամասից ավել օգտագործվող, սահմանազատված 0.03 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Էլպիդա Դավիդովայի (ծնված՝ 27.09.1957 թ.) սեփականությունը:

3.Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասում գտնվող բնակելի տանը, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, տուն N 110 փոստային հասցե:

4.Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. օգոստոսի 12
ք. Ալավերդի